

Արամ Ռ. Միրզոյան
պատմական գիտությունների թեկնածու

ՀԱՅՈՑ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԱՅՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՂՍԱԿՅՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, Գերմանական կայսրություն, մեղսակցություն, հուշեր և վկայություններ, գերմանական զինվորականներ:

Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրության մեջ առանցքային նշանակություն ունի այդ ոճրագործության կազմակերպիչների և մեղսակիցների թեմայի դիտարկումը: Մշված հարցի երկրորդ հատվածի համատեքստում առավել մեծ հետաքրքրություն է առաջացնում Գերմանական կայսրության մեղսակցության խնդիրը:

Հայ և օտարազգի հետազոտողները պարբերաբար անդրադարձել են այս խնդրին (ներառյալ ավելի լայն ընդգրկմանը՝ Հայոց ցեղասպանության ժամանակ և դրան նախորդող տարիներին Գերմանական կայսրության դերակատարմանը)՝ ուսումնասիրելով այն տարբեր դիտանկյուններից՝ քաղաքական, ռազմական, տնտեսական, մարդասիրական և այլն: Արդեն իսկ կուտակված հետազոտական պատկանելի նյութը անհրաժեշտություն է ստեղծել որոշ դիտարկումներ անելու:

Հողվածում ներկայացվում են տվյալ թեմայի վերաբերյալ որոշ միջանկյալ եզրահանգումներ և հետազոտության հեռանկարային ուղղություններ: Դրանք կարող են օգտակար լինել Հայոց ցեղասպանության մեջ Գերմանական կայսրության մեղսակցության թեմայով զբաղվել նախատեսող հետազոտողների համար՝ հնարավոր կրկնություններից խուսափելու և հետազոտական ուղին ավելի դյուրին դարձնելու նպատակով:

Նախքան բուն խնդրին անդրադառնալն անհրաժեշտ է արձանագրել այն փաստը, որ Գերմանիայի Բունդեսթագը երկու անգամ (2005 թ. հունիսի 15-ին և 2016 թ. հունիսի 2-ին) ընդունել է բանաձևեր, ճանաչել է նախ հայերի զանգվածային ոչնչացումը (2005 թ.), ապա նաև Հայոց ցեղասպանության փաստը (2016 թ.), ինչպես նաև անդրադարձել է Գերմանական կայսրության դերակատարմանը: Մասնավորապես, 2005 թ. բանաձևում նշվում է, որ Գերմանիան իր ներդրումն է ունեցել Հայոց ցեղասպանությունը մոռացության մատնելու գործում: Նաև հատուկ նշվում է, որ Գերմանական կայսրության ռազմաքաղաքական ղեկավարությունն սկզբից ևեթ քաջատեղյակ էր հայերի հալածանքների և սպանությունների մասին: Սակայն, չնայած դրան և Գերմանիայի հասարակության առանձին ներկայացուցիչների պահանջներին՝ հայերին օգնելու միջոցներ ձեռնարկելու մեջ գերմանական իշխանությունները ձեռնպահ մնացին իրենց դաշնակցի վրա որևէ ազդեցություն գործելուց¹: Իսկ 2016

1 “Erinnerung und Gedenken an die Vertreibungen und Massaker an den Armeniern 1915 – Deutschland muss zur Versöhnung zwischen Türken und Armeniern beitragen,” <http://dipbt.bundestag.de/doc/>

թ. բանաձևում նույն միտքն ավելի հստակ է շարադրված. «Բունդեսթագը ցավում է Գերմանական կայսրության անփառունակ դերի համար, որը, որպես Օսմանյան կայսրության գլխավոր դաշնակից, չփորձեց կասեցնել մարդկության դեմ այդ հանցագործությունները՝ չնայած հայերի կազմակերպված արտաքսման և ոչնչացման վերաբերյալ բացահայտ տեղեկություններին, այդ թվում [ստացված - Ա. Մ.]՝ գերմանացի դիվանագետներից և միսիոներներից»²: Հարկ է նշել, որ առաջին բանաձևի մեջ գերմանական օրենսդիրները խուսափել են օգտագործել «ցեղասպանություն» բառը կամ դրա գերմաներեն համարժեքը, իսկ 2016 թ. բանաձևի վերնագրում արդեն հստակ օգտագործվել է ցեղասպանություն բառի գերմաներեն համարժեքը՝ Völkermord: Ի տարբերություն հիմնական ոճրագործ Թուրքիայի, Գերմանիայի դեպքում առկա է պետական մակարդակով մեղսակցության փաստի ընդունումը: Ուստի հավանականությունը մեծ է, որ ուսումնասիրվող հարցը կդիտարկվի ավելի շատ գիտական հարթության մեջ, քան՝ քաղաքական:

Հայոց ցեղասպանության մեջ Գերմանական կայսրության մեղսակցության, իսկ ավելի լայն ընդգրկումով՝ դերակատարության հարցը պատմագիտության մեջ մի հակիրճ շրջան դիտարկվել է ցեղասպանությունից անմիջապես հետո, սակայն այնուհետև առժամանակ դուրս է մնացել հետազոտողների ուշադրությունից:

1965 թ. հետո, երբ Հայոց ցեղասպանության թեման դարձյալ լայն ընդգրկում ստացավ պատմագիտական և հասարակագիտական օրակարգում, դրան զուգահեռ կրկին արդիական դարձավ Գերմանական կայսրության մեղսակցության հարցը: Այդ ժամանակվանից մինչ այժմ թե՛ հայ, թե՛ օտարազգի հետազոտողների կողմից Գերմանական կայսրության մեղսակցության և, էլ ավելի լայն, դերակատարության հարցը ենթարկվել է բազմակողմանի հետազոտության՝ քաղաքական, տնտեսական, մարդասիրական, ռազմական և այլ դիտանկյուններից³:

Եթե փորձենք անդրադառնալ Գերմանական կայսրության մեղսակցության, իսկ ավելի լայն իմաստով՝ դերակատարման հարցին, ապա կարելի է արձանագրել, որ կառնչվենք պայմանական մի եռանկյունու հետ, որի գագաթներն են՝ 1. Գերմանական կայսրության մեղսակցության հստակ փաստը, 2. այդ մեղսակցության վերաբերյալ առկա թյուր կարծիքները, այլ կերպ ասած՝ առասպելները, 3. մարդասիրական արձագանքը:

btd/15/056/1505689.pdf, դիտվել է 21.11.2020:

2 “Erinnerung und Gedenken an den Völkermord an den Armeniern und anderen christlichen Minderheiten in den Jahren 1915 und 1916,” <https://dip21.bundestag.de/dip21/btd/18/086/1808613.pdf>, դիտվել է 15.11.2020:

3 Տե՛ս, օրինակ, Ulrich Trampener, *Germany and the Ottoman Empire, 1914-1918* (Princeton: Princeton University Press, 1968); Frank Weber, *Eagles on the Crescent. Germany, Austria, and the Diplomacy of the Turkish Alliance 1914-1918* (Ithaca: Cornell University Press, 1970); Степан Степанян, *Армения в политике империалистической Германии: (конец XIX - начало XX века)* (Ереван: Изд-во Айастан, 1975); Christoph Dinkel, “German Officers and the Armenian Genocide,” *Armenian Review* 44, no. 1 (1991): 77-133; Vahagn Dadrian, *German Responsibility in the Armenian Genocide: A Review of the Historical Evidence of German Complicity* (Watertown: Blue Crane Books, 1996); Stefan Ihrig, *Justifying Genocide: Germany and the Armenians from Bismarck to Hitler* (Cambridge: Harvard University Press, 2016):

Հայերի կոտորածների, իսկ հետագայում նաև Հայոց ցեղասպանության հանդեպ Գերմանիայի պաշտոնական դիրքորոշումը, որից էլ սերում է այդ երկրի մեղսակցության հարցը, ինչպես նաև գերմանական մարդասիրական արձագանքը, չեն ձևավորվել մեկ օրվա մեջ և որոշ առումով փոխկապակցված են եղել: Չնայած որ գերմանական մարդասիրական արձագանքի դիտարկումը դուրս է այս հոդվածի սահմաններից՝ հակիրճ պետք է նշել մեկ փաստ, որ հայ ժողովրդի, հայկական կոտորածների, իսկ հետագայում նաև Հայոց ցեղասպանության վերաբերյալ գոյություն չի ունեցել մեկ միասնական գերմանական մոտեցում: Հարցն ուսումնասիրելիս անհրաժեշտ է տարանջատել պաշտոնական Գերմանիայի դիրքորոշումը գերմանական եկեղեցական և մարդասիրական շրջանակների դիրքորոշումից⁴:

Պատմականորեն հայերի հանդեպ պաշտոնական Գերմանիայի դիրքորոշումը, որը որոշ սրբագրումներով անփոփոխ է մնացել մինչև Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը, ավելի շուտ է ձևավորվել, քան հայանպաստ մարդասիրական շարժումը: Առաջինի պարագայում մեկնակետ կարելի է համարել 19-րդ դարի 70-ական թվականների կեսը, որի բյուրեղացումը տեղի ունեցավ 1878 թ. Բեռլինի վեհաժողովի ժամանակ⁵: Օսմանյան կայսրությունը Գերմանական կայսրության կողմից դիտարկվում էր որպես եվրոպական երկրների միջև փոխզիջումների միջոցով հակասությունները մեղմելու համար նախատեսված տարածք: Բայց միաժամանակ Գերմանիայի համար կարևոր էր թույլ չտալ Օսմանյան կայսրության փլուզումը՝ կանխելու այլ մեծ տերությունների բախումն «օսմանյան ժառանգության» համար⁶:

Ժամանակի ընթացքում Գերմանական կայսրությունը լծվեց Օսմանյան կայսրությունում բացառիկ ազդեցություն ձեռք բերելու գաղափարի իրականացմանը, որի համար օգտագործվում էին թե՛ տնտեսական, թե՛ ռազմական միջոցները⁷: Իսկ

4 Թեմայի վերաբերյալ հետազոտությունների շարքում տե՛ս, օրինակ, Uwe Feigel, *Das evangelische Deutschland und Armenien: die Armenierhilfe deutscher evangelischer Christen seit dem Ende des 19. Jahrhunderts im Kontext der deutsch-türkischen Beziehungen*. (Göttingen: Vandenhoeck & Ruprecht, 1989); Աշոտ Հայրունի, *Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը* (Երևան, Նաիրի, 2002); Andrea Baumann, *Der Orient für Christus* (Basel, Brunnen-Verlag, 2007); Հայկ Մարտիրոսյան, *Գերմանական միսիոներական գործունեությունն Օսմանյան կայսրությունում. Մարաշի կայսրը (1896-1919 թթ.)* (Երևան, հեղինակային հրատ., 2016):

5 Հայանպաստ մարդասիրական շարժումը Գերմանիայում սկիզբ է առել որպես արձագանք 1894-1896 թթ. համիդյան կոտորածների: Ընդ որում, 1895 թ. սեպտեմբերի 29-ին հիմնված «Գերմանական արևելյան առաքելությունը» ի սկզբանե նպատակ ուներ գործունեություն ծավալել Արևելքի իսլամադավան բնակչության շրջանում: Սակայն, դրա հենց հաջորդ օրը Կոստանդնուպոլսում տեղի ունեցած հայկական ջարդերն օրակարգային դարձրեցին համիդյան կոտորածներից տուժած հայերին օժանդակելու գործը (Տե՛ս Հայրունի, *Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը*, 36-37):

6 Հարցի վերաբերյալ տե՛ս, օրինակ, Ihrig, *Justifying Genocide*, 24:

7 Դա կախված էր նաև արտաքին քաղաքականության մեջ որոշակի փոփոխությունների հետ: Եթե միասնական Գերմանական կայսրության ստեղծման առաջին տարիներին գերմանական իշխանություններն ի դեմս կանցլեր Բիսմարկի առանձնակի հետաքրքրված չէին գաղութացման քաղաքականությամբ, ապա 1882 թ. սկսած այդ մոտեցումը կրում է որոշակի փոփոխություններ: (Տե՛ս *Genocide in the Twentieth Century. Critical Essays and Eyewitness Account*, ed. Samuel Totten, William S. Parsons, Israel W. Charny (New York: Garland Publishing, 1995), 7): Քանի որ Գերմանիան ոչ էր միացել «գաղութացման մրցավազքին», ինչի վերաբերյալ պարբերաբար փաստանք էր

Օսմանյան կայսրությունում սեփական քաղաքականության իրագործման նպատակով նպաստավոր մթնոլորտ ստեղծելու համար Օսմանյան կայսրության ներքին գործերին չխառնվելու քաղաքականությունն էր վարվում, որի դրսևորումներից մեկն էր 1894-1896 թթ. հայերի կոտորածների հանդեպ պաշտոնական Գերմանիայի գործնական արձագանքի բացակայությունը: Այդ մոտեցումը պահպանվեց նաև Ադանայի ջարդերի ժամանակ և իր գազաթնակետին հասավ Հայոց ցեղասպանության տարիներին, երբ գերմանական միջամտությունը կրում էր խիստ հաստատական բնույթ և միտված էր առաջին հերթին իր հասցեին հնարավոր մեղադրանքները կանխելուն⁸: Այս ամբողջ ժամանակահատվածի գերմանական պաշտոնական դիրքորոշումն ամփոփված և լավագույնս ներկայացված է երկու դրվագում.

1. Գերմանական կայսրության առաջին կանցլեր Օտտո ֆոն Բիսմարկը 1876 թ. հոկտեմբերի 20-ին հայտարարել էր, որ ողջ Թուրքիան՝ ներառյալ իր տարբեր «ցեղերը», որպես քաղաքական միավոր արժեքավոր չէ, որպեսզի քաղաքակիրթ եվրոպացիները զոհեն իրենց՝ պատերազմելով հանուն դրա: Այդ «ցեղերից» մեկը հայերն էին, որոնց վերաբերյալ Բիսմարկը 1883 թ. կայսր Վիլհելմ I-ին ասել էր, որ չի պատրաստվում այնպիսի քաղաքականություն վարել, որը «կզոհաբերեր ...գործնական նպատակները հանուն անցողիկ մարդասիրական լուսապսակի»⁹:

2. 1915 թ. դեկտեմբերի 7-ին Գերմանիայի կանցլեր Բելթման Հոլվեգին ուղղված գեկուցագրում Թուրքիայում Գերմանիայի դեսպան կոմս Պաուլ Վոլֆ Մետերնիխսը առաջարկում էր “Norddeutsche Allgemeine Zeitung” թերթում մի հոդված տպագրել, որտեղ պետք է անհանգստություն արտահայտվեր տեղահանված հայերի ճակատագրի համար: Նա նաև առաջարկում էր թույլատրել գերմանական մամուլում հայկական հալածանքների հանդեպ զայրույթ արտահայտել և դադարեցնել թուրքերի հասցեին գովեստներ շոյալելը¹⁰: Սակայն այդ գեկուցագրի վրա Բելթման Հոլվեգը մակագրում է՝ «մերժել նշված միջոցառումները» և նշում, որ գերմանացիների միակ նպատակն է մինչև պատերազմի ավարտը Թուրքիան իրենց կողքին պահելը, անկախ նրանից՝ կզոհվեին հայերը, թե ոչ¹¹:

հնչում գերմանական հասարակական-քաղաքական շրջանակներում (տե՛ս, օրինակ, Paul Rohrbach, *German World Policies* (New York: the Macmillan Company, 1915), 133): Օսմանյան կայսրությունը դիտարկվում էր եթե ոչ որպես գաղութացման թիրախ, ապա որպես երկիր, որը Գերմանիան կարող էր օգտագործել սեփական շահերի համար: Հատկանշական է, որ հենց 1882 թ. է կանցլեր Բիսմարկն Օսմանյան կայսրություն ուղարկում գերմանական առաջին ռազմական առաքելությունը գնդապետ Կեիլերի գլխավորությամբ: Տե՛ս Մարտիրոսյան, *Գերմանական միսիոներական գործունեությունը*, 24:

8 Susan K. Blair, “German Response to Armenian Genocide,” *Armenian Review* 37, no. 4 (1984): 20-25:

9 Ihrig, *Justifying Genocide*, 25. Ավելորդ չէ նշել, որ սա իրական քաղաքականության՝ Realpolitik-ի վառ օրինակ է, որը կյանքի է կոչվել և իրականացվել հենց Օտտո ֆոն Բիսմարկի կողմից:

10 Դեռևս համիդյան կոտորածներից սկսած գերմանական որոշ թերթեր որդեգրել էին թուրքամետ հրատարակությունների քաղաքականությունը (Մարտիրոսյան, *Գերմանական միսիոներական գործունեությունը*, 24): Այդ մոտեցումը գործում էր նաև Հայոց ցեղասպանության տարիներին:

11 Wolfgang Gust W. (Hg.), *Der Völkermord an den Armeniern 1915/16. Dokumente aus dem Politischen Archiv des deutschen Auswärtigen Amtes* (Springe: Zu Klampen Verlag, 2005), 395.

Ուսումնասիրելով Հայոց ցեղասպանության հարցում գերմանական մեղսակցության հարցը՝ հարմարության և համակարգվածության առումով այն կարելի է դիտարկել չորս առանձին հարթություններում՝

1. կենտրոնական իշխանությունների դիրքորոշումը,

2. Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Օսմանյան կայսրությունում ծառայող գերմանական զինվորականների դերակատարումը,

3. Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Օսմանյան կայսրությունում գործած գերմանական դիվանագետների և հյուպատոսների տնտեսական, միսիոներական գործունեություն իրականացնող անձանց դերակատարումը,

4. հրապարակախոս Պաուլ Ռոհրբախի¹² դերակատարումը:

Եթե առաջին երեք հարթությունների առանձնացումն ինքնին հասկանալի է և մասնագիտական հանրության համար լրացուցիչ բացատրության կարիք չունի, ապա Պաուլ Ռոհրբախի պարագան հակիրճ հիմնավորման անհրաժեշտություն ունի: Հայոց ցեղասպանությունում Գերմանական կայսրության մեղսակցության թեմային անդրադառնալիս հայ պատմագրության մեջ հաճախ կարելի է հանդիպել կարծիքի, որ տեղահանության, իսկ առանձին դեպքերում նաև հայերի ուղղակի ոչնչացման գաղափարի հեղինակը հենց Ռոհրբախն էր¹³: Որպես այս տեսակետի հիմնավորում, մասնավորապես, հիշատակվում են Ռոհրբախի գաղտնի զեկույցները, որոնք նա արել է «Գերմանա-ասիական ընկերության» ժողովի ժամանակ՝ 1913 թ. նոյեմբերի 23-ին¹⁴, իսկ մեկ այլ հետազոտության համաձայն՝ նոյեմբերի 29-ին¹⁵: Ընդ որում՝ երկու դեպքում էլ հղում է արվում նույն ռուսական աղբյուրին:

Ի հակադրում նման մեղադրանքների, առկա են Ռոհրբախի հայանպաստ գործունեության բազում փաստեր, որոնք «ձգվում են» մի քանի տասնամյակ՝ սկսած համիդյան կոտորածներից մինչև իր մահը՝ 1956 թվականը: Ռոհրբախը թողել է գիտական և հրապարակախոսական մեծ ժառանգություն, սակայն Հայկական հարցի և հայերի հանդեպ իր դիրքորոշման տեսանկյունից այդ ժառանգությունը դեռևս քննական ուսումնասիրության անհրաժեշտություն ունի: Ասվածը նաև վերաբերում է իր անձնական արխիվին: Ուստի, Գերմանիայի մեղսակցության ուսումնասիրության

12 Գերմանացի հրապարակախոս, մտավորական, 20-րդ դարի առաջին տասնամյակների ազգային պահպանողական մտքի ամենահայտնի ներկայացուցիչներից մեկը:

13 Տե՛ս, օրինակ, Լեո, *Անցյալից* (Թիֆլիս, Խորհրդային Կովկաս, 1925); Երվանդ Սարգսյան, *Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում* (Երևան, Հայաստան, 1964); Андрей Аветян, *Германский империализм на Ближнем Востоке. Колониальная политика германского империализма и миссия Лимана фон Сандерса* (Москва, “Международные отношения,” 1966); Джон Киракосян, *Западная Армения в годы Первой мировой войны* (Ереван, Изд-во Ереванского университета, 1971); Степан Акопян, *Западная Армения в планах империалистических держав* (Ереван, АН АрмССР, 1967); Մակիչ Արզումանյան, *Հայաստան. 1914-1917* (Երևան, Հայաստան, 1969); Երվանդ Սարգսյան, *Политика османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начале XX вв.* (Ереван, АН АрмССР, 1972); Լիլիթ Հովհաննիսյան, *Հայկական հարցը և մեծ տերությունները 1914-1917 թթ.* (Երևան, Գիտություն, 2002):

14 Аветян, *Германский империализм*, 44.

15 Акопян, *Западная Армения*, 39.

հեռանկարների տեսանկյունից կարևոր թեմա կարող է լինել Պատու Ռ-ոհրբախի գործունեության և հրապարակախոսական ծառանգության, ինչպես նաև չհրապարակված նյութերի մանրագնին ուսումնասիրությունը՝ Հայկական հարցի, Հայոց ցեղասպանության և հայ ժողովրդի հանդեպ նրա ունեցած դիրքորոշման լույսի ներքո: Ման աշխատանքը հնարավորություն կտա պատմական սովորից հանելու Պատու Ռ-ոհրբախի անձը և հստակ ներկայացնելու նրա դիրքորոշումն ու դերակատարումը վերը նշված հարցերում՝ հնարավորինս խուսափելով անհիմն մեղադրանքներից կամ արդարացումներից:

Հարկ է նշել, որ հայ պատմագրության մեջ չափազանցված և ոչ այդքան ստույգ տեղեկություններ հանդիպում են ոչ միայն Պատու Ռ-ոհրբախի, այլ նաև ընդհանրապես Գերմանական կայսրության մեղսակցության և/կամ դերակատարման վերաբերյալ: Ուստի ուսումնասիրության մեկ այլ մասնակիորեն հեռանկարային ուղղություն է հայ պատմագրությունում՝ ինչպես հայաստանյան, այնպես էլ սփյուռքյան, թեմայի վերաբերյալ առկա տեսակետների ուսումնասիրությունը և դրանց քննական վերանայումը՝ հիմնվելով, նախ և առաջ, Առաջին համաշխարհային պատերազմի տարիների գերմանական դիվանագիտական փաստաթղթերի, ինչպես նաև վերջին շրջանում թեմայի վերաբերյալ լույս տեսած նոր հետազոտությունների վրա: Արդյունքում հնարավորություն կստեղծվի օբյեկտիվ պատճառներով հայ պատմագրության մեջ տեղ գտած որոշ թյուր տեսակետների հիմնավորված հստակեցման համար, ինչն ուսումնասիրողներին հնարավորություն կտա հետագայում զերծ մնալու դրանց հիման վրա ոչ ստույգ հետևություններ անելուց: Նշված օբյեկտիվ պատճառներից կարելի է մատնանշել հետևյալ երկուսը.

1. Ժամանակին գերմանական դիվանագիտական փաստաթղթերի ոչ հասանելի լինելը հայ հետազոտողներից շատերի համար: Ասվածը ճիշտ է ինչպես զուտ ֆիզիկական հասանելիության հարթությունում, այնպես էլ՝ լեզվական:

2. Երբեմն հետազոտության հիմք են ծառայել Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Անտանտի երկրներում, մեծ մասամբ Ֆրանսիայում և Անգլիայում լույս տեսած նյութերը և մամուլի հրապարակումները: Դրանք կրում էին զգալի չափով քարոզչական բնույթ՝ նպատակ ունենալով վարկաբեկելու Գերմանական կայսրությունը, ինչի նպատակներից մեկն էր դեռևս չեզոք դիրք զբաղեցնող Ամերիկայի Միացյալ Նահանգների վրա ազդելը:

Առկա փաստերը թույլ են տալիս պնդել, որ Հայոց ցեղասպանության մեջ գերմանական անմիջական մեղսակցության տեսանկյունից ամենածանր մասնաբաժինը պատկանում է Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Օսմանյան կայսրությունում ծառայած գերմանացի զինվորականներին՝ շարքայիններից մինչև բարձր սպայական անձնակազմ: Որպես օրինակ կարելի է հակիրճ նշել մի քանի դրվագ:

1. Օսմանյան բանակի գլխավոր շտաբի երկաթուղային ծառայության ղեկավար գնդապետ Բյոտրիխը¹⁶ 1915 թ. հոկտեմբերի 17-ին իր ստորագրությամբ գրավոր

16 Այս հոդվածում արդեն հիշատակված Վահագն Դադրյանի աշխատության մեջ Բյոտրիխի

հրաման է արձակում Բաղդադի երկաթուղու կառուցման վրա աշխատող հայերին տեղահանելու համար¹⁷: Պետք է նշել, որ գնդապետ Բյուրիխը քաջատեղյակ էր մինչ այդ տեղահանված հայերի ճակատագրից:

2. Թուրքական 4-րդ բանակի շտաբի պետ, գերմանացի հրետանավոր, մայոր կոմս Էբերհարդ Վոլֆսկել ֆոն Ռայխենբերգն անմիջականորեն մասնակցել է հայերի սպանություններին: 1915 թ. սեպտեմբերին Ուրֆայի ինքնապաշտպանության օրերին նա անձամբ էր ղեկավարում թուրքական գործողությունները՝ դրսևորելով առանձնակի նպատակաուղղվածություն: Բացի այդ, ֆոն Ռայխենբերգը համակարգել է հայերի դեմ գործողությունները 1915 թ. Չեյթունում և նույն տարվա օգոստոսին Մուսա լեռում¹⁸:

3. Օսմանյան բանակի Գլխավոր շտաբի պետ Ֆրիդրիխ Բրոնզարտ ֆոն Շելենդորֆը նույնպես հրաման է արձակել տեղահանելու հայերին (1915 թ. հուլիսի 25-ին): Ընդ որում, նույն հրամանի մաս է կազմում նաև զինաթափված և աշխատանքային գումարտակներում ընդգրկված հայ զինծառայողների հանդեպ խիստ վերաբերմունք ցուցաբերելը¹⁹: Ի դեպ, այս հրամանի անմիջական հետևանքները կարելի է հանդիպել Հայոց ցեղասպանությունը վերապրածների հուշերում և վկայություններում²⁰, որի երկու օրինակ ներկայացվելու է հետագա շարադրանքում:

4. Հետպատերազմյան ժամանակաշրջանում գերմանական մամուլում առնվազն երկու հրապարակում հայտնվեց, որոնք փաստում էին հայերի տեղահանման մեջ գերմանացի սպաների դերակատարումը: Առաջին հոդվածը լույս է ընծայվել 1918 թ. նոյեմբերին “Deutsch-Armenisches Korrespondenz”-ում, որտեղ խոսք էր գնում Գերմանիայի դեմ հնչող մեղադրանքների մասին, մասնավորապես նշվում էր, որ հայերի տեղահանումների հարցում վերջինս հանդես էր եկել որպես խորհրդատու: Այդ հարցում կենտրոնական տեղը հատկացվում էր թուրքական առաջին, այնուհետև՝ նաև 6-րդ բանակների հրամանատար ֆելդմարշալ Կոլմար ֆոն դեր Գոլցին: Քանի որ հայերի տեղահանությունը ռազմական միջոցառում էր, այն չէր կարող հայտնի չլինել Թուրքիայում գտնվող գերմանացի սպաներին: Այդ առիթով նշվում է, որ հայերի տեղահանության նախագիծը, որը թղթի վրա համեմատաբար «անմեղ» տեսք ուներ, ներկայացվել էր ֆոն դեր Գոլցին, որն իր հավանությունն էր տվել դրան²¹:

նագմական կոչումը նշված է որպես փոխգնդապետ, տե՛ս Dadrian, *German Responsibility*, 19:

17 Hilmar Kaiser, “The Baghdad Railway and the Armenian Genocide, 1915-1916. A Case Study in German Resistance and Complicity,” in *Remembrance and Denial. The Case of the Armenian Genocide*, ed. Richard G. Hovannisian (Detroit: Wayne State University Press, 1999), 81.

18 Մանրամասների համար տե՛ս Eberhard Count Wolffskeel von Reichenberg, *Zeitoun, Mousa Dag, Ourfa: Letters on the Armenian Genocide*, ed. and introduced by Hilmar Kaiser (New Jersey: Princeton, 2001), XIV-XV:

19 Dadrian, *German Responsibility*, 117.

20 Հարկ է նշել, որ Հայոց ցեղասպանությունը վերապրածների հուշերն ու վկայությունները կարդալիս առանձնահատուկ ուշադրություն է գրավում ակադեմիական գրականության մեջ արձանագրված պատմական փաստերի և իրողությունների ներկայացումը դրանց անմիջական մասնակիցների կողմից:

21 Dinkel, *German Officers*, 79.

Երկրորդ հրապարակումը լույս է տեսել “Allgemeine Missions-Zeitschrift” ամսագրի 1919 թ. փետրվարյան համարում, որի հեղինակն էր Յուլիոս Ռիխտերը: Նա գրում էր, որ գերմանացի սպաներն էին առաջարկել թուրքերին՝ տեղահանելու սահմանային շրջանների ոչ հուսալի հայ բնակչությանը²²: Տրապիզոնում Ավստրո-Հունգարիայի հյուպատոս Կվյատկովսկին 1915 թ. հոկտեմբերի 22-ին Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի նախարար Շտեֆան Բուրիանին ուղարկած գեկուցագրում նշում է, որ վստահելի գերմանական աղբյուրից իրեն հայտնի էր դարձել, որ հայերի վնասագերծման առաջարկը (սակայն ոչ այն փաստացի եղանակով, ինչպես իրականացվել էր) ի սկզբանե եղել է գերմանական կողմից²³:

Ընդհանրապես հարկ է նշել, որ Առաջին աշխարհամարտի տարիներին Օսմանյան կայսրությունում ծառայած գերմանացի բարձրաստիճան գինվորականների զգալի մասի մոտ առկա էր ընդգծված հակակրանք հայերի հանդեպ: Դրանց շարքում կարելի է հիշատակել թուրքական 3-րդ բանակի շտաբի պետ փոխգնդապետ Ֆելիքս Գուդեին, ծովային կցորդ Հանս Հումանին, փոխ-ծովակալ Վիլիելմ Սուշոնին, ծովակալ Գուդոֆ ֆոն Ուգեդումին և այլոց: Նման վերաբերմունքի պատճառների շարքում նշվում են հիմնական երկուսը.

1. Հայերն ընկալվում էին որպես թշնամական տարր, և գոյություն ունեւր համոզմունք հայերի ապստամբ լինելու վերաբերյալ²⁴:

2. Հայերն ընկալվում էին որպես «մակաբույծներ», «ձրիակերներ», «չարջիներ» և այլ նման ոչ դրական կերպարներ: Ուստի հայերը լիովին արժանի էին իրենց հետ կատարվածին²⁵:

Արխիվային փաստաթղթերի տեսանկյունից նշված հարցի ուսումնասիրությունը խնդրահարույց է: Գերմանական ռազմական արխիվի մեծ մասը ոչնչացվել է Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում, իսկ Ֆրայբուրգի ռազմական արխիվում պահվող նյութերը սահմանափակ տվյալներ են պարունակում թեմայի վերաբերյալ: Մյուս կողմից, Օսմանյան գլխավոր շտաբի արխիվում առկա նյութերը հասանելի չեն ուսումնասիրողների լայն հանրությանը²⁶: Ուստի գերմանական գինվորականների՝ հատկապես կրտսեր սպայական անձնակազմի և շարքային գինվորականների մեղսակցության թեմայի հետագա ուսումնասիրության տեսանկյունից ամենահետմանկարային ուղղությունները կարող են լինել հետևյալ երկուսը.

1. Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրությունում գտնվող օտարերկրյա միսիոներների և մասնագետների, հատկապես՝ Բեռլին-Բադդադ երկաթգծի կառուցման վրա աշխատող եվրոպացի մասնագետների անձնական արխիվների ուսումնասիրությունը:

22 Նույն տեղում, 79-80:

23 Dadrian, *German Responsibility*, 163-164.

24 Այս տեսակետի արմատավորման մեջ ոչ վերջին դերն էր խաղում գերմանացիների կողմից Անդրկովկասում իսլամադավանների ապստամբություն հրահրելու ցանկությունը:

25 Dinkel, *German Officers*, 121.

26 Eberhard Count Wolffskeel von Reichenberg, XII-XIII.

2. Հայոց ցեղասպանությունը վերապրած հայերի հուշագրությունների ուսումնասիրությունը՝ դրանցում առկա փաստերի մեկտեղման համար:

Առաջին խմբին պատկանող տեղեկությունների վառ օրինակ է վերջերս պրոֆեսոր Դորա Սաքայանի կողմից շրջանառության մեջ դրված շվեյցարուհի Կլարա Զիգրիստ-Հիլթիի օրագիրը²⁷: Նա շվեյցարացի ճարտարագետ Ֆրից Զիգրիստ-Հիլթիի կինն էր, որը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին մասնակցում էր Բեռլին-Բաղդադ երկաթուղու Ամանոսի հատվածի կառուցման աշխատանքներին: Իր օրագրում տիկին Զիգրիստ-Հիլթին Բաղդադի երկաթուղու կառուցման աշխատանքներում ներգրավված հայերի ոչնչացմանը գերմանացի զինվորականների մասնակցության վերաբերյալ հետևյալն է հաղորդում. «Գերմանացի զինվորները, որոնք իրագործված արհավիրքների ակնատեսը կամ մասնակիցն են եղել, չեն կարողանում զսպել իրենց գայրոյթը: «Շան վրա անգամ չէր կարելի այդպես կրակել, - ասում են նույնիսկ հրամանը կատարող զինվորները և ավելացնում, - եթե գերմանացի զինվորներն այս բոլորի մասին դեռ հայրենիքում եղած ժամանակ իմանային, ոչ մեկն իրենցից չէր գա այստեղ՝ այս ջարդերի մասնակիցը դառնալու»²⁸: Այս դրվագը կարևոր է ոչ միայն այն բանի համար, որ արձանագրում է գերմանացի զինվորականների անմիջական ներգրավվածությունը հայերի ոչնչացման գործընթացում, այլ նաև առաջացնում է այդ մեղսակցության նոր բացարձակ «ծանրության կենտրոն»՝ Բաղդադի երկաթուղու շինարարության Ամանոսի հատվածն ու դրա մերձակայքը: Նախքան այս, հատկապես երկու դրվագ էր առանձնանում գերմանական զինվորականների ապացուցված և հասցեական մեղսակցության հարցում.

1. Թուրքական 4-րդ բանակի շտաբի պետ գերմանացի հրետանավոր մայոր Էբերհարդ Վոլֆսկել ֆոն Ռայխենբերգը 1915 թ. սեպտեմբերին Ուրֆայի հերոսամարտի օրերին հրամաններ է արձակել և անձամբ մասնակցել հայերի դեմ գործողություններին²⁹:

2. Գնդապետ Բյուտրիխի՝ 1915 թ. վերը հիշված հոկտեմբերի 17-ի գրավոր հրամանը Բաղդադի երկաթուղու վրա աշխատող հայերին տեղահանելու մասին: Ավելին, Բյուտրիխը մեծ ջանասիրություն էր ցուցաբերել Բաղդադի երկաթուղու վրա աշխատող հայերի ամբողջական ցուցակները կազմելու և նրանց տեղահանությունն արագացնելու հարցում³⁰:

Կլարա Զիգրիստ-Հիլթիի օրագրի մեջ առկա տեղեկությունները հնարավորություն են տալիս պնդելու, որ երկրորդ դեպքում առկա է գերմանական անմիջական մեղսակցության, այսպես կոչված, ամբողջական շղթան՝ հրամանի արձակում, տեղահանության կազմակերպում, տեղահանված հայերի ոչնչացում: Ընդ որում, ի տարբերություն Ուրֆայի ինքնապաշտպանության դեպքի, երբ զուտ ֆորմալ առումով

27 Դորա Սաքայան, *Նրանց բշուր են անսպասները. Կլարա և Ֆրից Զիգրիստ-Հիլթիները Հայոց ցեղասպանության ակնատեսներ (1915-1918)* (Երևան, ԵՊՀ հրատ., 2017):

28 Սաքայան, *Նրանց բշուր են անսպասները*, 184:

29 Eberhard Count Wolffskeel von Reichenberg, XV.

30 Սաքայան, *Նրանց բշուր են անսպասները*, 160:

գերմանացի մայր ֆոն Ռայխենբերգի գործունեությունը որոշ շրջանակներ կարող են փորձեն հիմնավորել «ռազմական անհրաժեշտությամբ»³¹, ապա երկրորդ դեպքում դա ուղղակի գործողություն էր խաղաղ և անզեն հայերի դեմ:

Գերմանական կայսրության մեղակցության թեման Հայոց ցեղասպանության վերապրածների հուշերում և վկայություններում

Հայոց ցեղասպանությունը վերապրածների հուշերում թեմայի վերաբերյալ տեղեկությունները կարելի է բաժանել երեք մեծ ուղղությունների՝

1. հայերի տեղահանության և/կամ ոչնչացման գաղափարի հեղինակում կամ համաձայնություն դրա հետ,

2. տեղում օժանդակություն ցեղասպանության գործընթացին,

3. հայերի հանդեպ իրականացված բռնություններ, մասնակցություն հայերի սպանություններին:

Հայերի տեղահանության և/կամ ոչնչացման գաղափարի հեղինակում կամ համաձայնություն դրա հետ

Տվյալ հարցի վերաբերյալ հիշատակումներ Հայոց ցեղասպանությունը վերապրածների հուշերում և վկայություններում պարբերաբար կարելի է հանդիպել: Հարկ է հատուկ նշել, որ այս ուղղության վկայությունները նախ և առաջ ունեն ոչ թե պատմական փաստեր ներկայացնելու գործառույթ, այլ՝ «տրամադրություն արտահայտելու»: Սակայն նույնիսկ այդ պարագայում սրանք կարևոր պատմական նշանակություն ունեն, քանի որ լույս են սփռում թե՛ հայերի և թե՛ թուրքերի և քրդերի մեջ առկա համոզմունքների ու պատկերացումների վրա: Այս ուղղության վկայություններն ամենահաճախ հանդիպողն են: Ահա մի քանի օրինակ:

Հերիքնազան Գրիգորյանը՝ Վանի նահանգի Արճակ գյուղից, իր վկայություններում նշում է, որ համազյուղացիների ներկայությամբ այրեցին եկեղեցին՝ ողջակիզելով քահանային: Նման բան չանելու հայերի խնդրանքներին ի պատասխան ոճրագործները նշեցին, որ «Գերմանը մեզի իրաունք է տուել այդպես անելու»³²:

Նույն գյուղից մեկ այլ վերապրածի՝ Մարիամ Սարգսյանի խոսքերով, իրենց թաղի բոլոր կանանց հավաքում են և ի պատասխան նրանց լացին կայմակամը հայտնում է, «թե՛ ինչի՛ էք մեզնից նեղանում, ձեր գերմանացին է մեզ իրաունք տուել ձեզ սպաննելու և կոտորելու»³³:

Ստեփան Զաքարի Ստեփանյանը պատմում է, որ համաշխարհային պատերազմի

31 Եթե հարցին անդրադառնալ պատերազմող երկու դաշնակից երկրների՝ Թուրքիայի և Գերմանիայի տեսանկյունից:

32 Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու: Հատոր I: Վանի նահանգ, գլխ. խմբ.՝ Ամատունի Վիրաբյան (Երևան, Հայաստանի ազգային արխիվ, 2012), 79:

33 Նույն տեղում, 82:

ժամանակ շատ հայեր անցան ռուսների կողմը: Դա թուրքերին «դուր չեկավ» և նրանք «գնացին Վիլիելմ կայսրի մոտ բողոքելու»: Կայսրը «պատվիրեց» տեղահան անել հայերին, իսկ թուրքերը «ճոխացրեցին» ծրագիրը³⁴:

Արաքս Մկրտիչյանը, խոսելով Խարբերդի հայ բնակչության տեղահանության մասին, վկայում է, որ թուրքերը բազմիցս ասել են հայերին. «Մենք ինչ ընենք, ձեր քրիստոնեայ սիրուած Գերմանը մեզի սորվեցուց ատանկ ընել»³⁵:

Իր անտիպ հուշերում Էրզրումի նահանգի Յայլա գյուղից Հովհաննես Գասպարյանը նկարագրում է Հայոց ցեղասպանության որոշման կայացման սեփական տարբերակը, ըստ որի 1915 թ. սկզբին «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը գաղտնի նիստ էր գումարել, որտեղ որոշում էր կայացվել կոտորել հայերին: Որոշումը պետք է ստորագրեր «Սուլթան թագավոր Մունսեթ Ռեշիթը»³⁶: Սակայն Թալեաթ փաշան կասկածում է, որ սուլթանը չի ստորագրի որոշումը: Ուստի կապվում է Գերմանիայի դեսպանի հետ և խնդրում, որ նա մի քանի բռնի բռնակառն առաջ գնա «թագավորի» մոտ և արդեն նրա ներկայությամբ և ճնշմամբ սուլթանը վավերացնում է կուսակցական գաղտնի ժողովի որոշումը³⁷:

Տեղում օժանդակություն ցեղասպանության գործընթացին

Հայոց ցեղասպանությունը վերապրածների հուշերում և վկայություններում հանդիպում են նաև տեղեկություններ Հայոց ցեղասպանության գործընթացին գերմանացիների միտումնավոր կամ ակամայից³⁸ օժանդակության մասին: Բերենք մի քանի օրինակ:

Խարբերդի նահանգի Հուսեյնիկ գյուղում հայերին ունեզրկելու, տեղահանելու և սպանելու գործողություններին նախորդում էին տեղի հոգևորականներից բռնությամբ կորզվող հորդորներն՝ ուղղված իրենց հոտին, չընդդիմանալ և ենթարկվել հրամաններին: Հոգևորականների վրա ճնշում գործադրելու հարցում իրենց մասնակցությունն ունեին գերմանացիները³⁹:

Մանուկ Փուսուլեանի խոսքերով Չնքուշի Պալախոր⁴⁰ գյուղում 1915 թ. մայիսի 1-ին

34 Վերծինե Սվազյան, *Հայոց ցեղասպանություն: Ականատես վերապրողների վկայություններ* (Երևան, ՀՅԹԻ, 2011), 276:

35 *Հայոց ցեղասպանությունը օսմանկան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու: Հատոր III: Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքի, Սեբաստիայի, Տրապիզոնի նահանգներ, Պարսկաստան, գլխ. խմբ.՝ Ամատունի Վիրաբյան* (Երևան, Հայաստանի ազգային արխիվ, 2012), 266:

36 Խոսքը Մուհամմեդ V Ռեշադ սուլթանի մասին է:

37 Հովհաննես Գասպարյանի կենսագրությունը: ՀՅԹԻ հավաքածու, բաժին 11, ֆհ. 4:

38 Ինչպես, հավանաբար, եղել է գերմանացի միսիոներ Յոհաննես Էհմանի պարագայում, ինչի մասին խոսվելու է քիչ անց:

39 Bertha Nakshian-Ketchian, *In the Shadow of the Fortress. The Genocide Remembered* (Toronto, Zoryan Institute of Canada, 1988), 12.

40 Այստեղ, հավանաբար, շփոթմունք է եղել, քանի որ Չնքուշ գավառակը և համանուն գյուղը գտնվում էին Արևմտյան Հայաստանի Դիարբեքի նահանգում, իսկ Պալախոր գյուղը՝ Արևմտյան Հայաստանի Էրզրումի նահանգում: Տե՛ս, համապատասխանաբար, Թ. Խ. Հակոբյան, Ս. Ս. Մելիք-

ժողով է տեղի ունեցել՝ կազմակերպելու համար հայերի ոչնչացումը: Տեղացիներից բացի ժողովին ներկա էր գերմանացի երկու սպա՝ «Փօն Վէպեր Հայտը» և «Բիքարտը», որոնք հրետակոծել և ավերել էին Ուրֆայի հայկական եկեղեցին⁴¹: Այդ «գերման ռճրագործները» Չնքուշից մեկ ժամ հեռավորության վրա գտնվող Տուտանի անդունդն⁴² ամենահարմար վայրն են համարում՝ Չնքուշի հայությանը բնաջնջելու համար⁴³:

Էրզրումի նահանգի Խաստուր գյուղից Տեր Ղևոնդ քահանա Սահակյանն իր վկայության մեջ նշում է, որ 1914 թ. սեպտեմբերին՝ Թուրքիայի՝ պատերազմի մեջ մտնելու շեմին, երկու գերմանացի սպա 80 հոգանոց չեթեների խմբի գլուխ անցած այցելում են Խաստուր գյուղը, որտեղ հայերին հայտնում են, որ «Եթե դուք չմիանաք գերմանաթուրք դաշնակցության, ձեզ բոլորիդ կը կոտորենք: Արդէն Փարիզը գրաւուելու վրայ է. շուտով Կարսն ու Թիֆլիսն ալ մեր ձեռքը կը լինեն: Ձեր կամաւորներուն յորդորեցէք, որ չկռուին մեր դէմ, ապա թէ ոչ՝ Կովկասի հայութիւնն ալ կը բնաջնջուի...»⁴⁴:

Խարբերդի հայ բնակչության տեղահանության և կոտորածների մասին Արսեն Խաչիկյանի հաղորդած տվյալներում առկա է հետևյալ պատմությունը: Ապրիլից մի շաբթ հայ երևելիների բանտարկում են: Հայերի հնարավոր դիմադրությունը կանխելու համար որոշվում է հավաքել նրանց մոտ առկա զենքերը: Դրա համար կառավարությունը դիմում է հայոց առաջնորդ Պսակ Ծայրագույն Վարդապետին, գերմանացի միսիոներ Յոհաննես Էհմանին և հայ ավետարանչական հովիվ Վերապատվելի Վարդան Ամիրխանյանին: Նրանց միջոցով սկսվում է քարոզ, որ բանտարկված ոչ կուսակցական հայերին բաց կթողնեն ի պատասխան հայերի կողմից զենքեր հանձնելուն⁴⁵: Էհմանը, որը բավական հարգանք էր վայելում հայերի շրջանում, հայ հոգևորականների հետ համատեղ քարոզում էր զենքերը հանձնելու անհրաժեշտությունը⁴⁶: Սակայն զենքերը հանձնելուց հետո բանտարկվածները արտրվեցին, քաղաքում և շրջակայքում լարված իրավիճակ հաստատվեց: Տղամարդիկ ձերբակալվում էին, Խարբերդի հարակից գյուղերի բնակչությունը՝ ոչնչացվում: Երբ հայ կանայք դիմում են Էհմանին, հայտնելով եղելությունը, նա չի հավատում այդ պատմություններին՝ պնդելով, որ կառավարությունը խոսք էր տվել արքային, բայց ոչ սպանել հայերին⁴⁷: Յոհաննես Էհմանի նմանատիպ գործունեության մասին տեղեկություններ են պարունակվում նաև ծննդով Վանից Հայկ Վարդանյանի

Բախշյան, Հ. Խ. Բարսեղյան, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, Հատոր 4 (Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1998), 262, 285:

41 1915, *Աղէտ և վերածնունդ*, կազմող՝ Լևոն Մեսրոպ (Փարիզ, Արաքս, 1951), 445: Նշենք, որ մինչ այս ապացուցված է միայն գերմանացի հրետանավոր, մայոր Էբերհարդ Վոլֆսկել ֆոն Ռայխենբերգի մասնակցությունը Ուրֆայի հերոսամարտի դեմ գործողություններում:

42 Գտնվում է Արևմտյան Հայաստանի Դիարբեքրի նահանգում:

43 1915, *Աղէտ և վերածնունդ*, 445:

44 *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում*: Հատոր III, 247:

45 Նույն տեղում, 259:

46 Նույն տեղում, 260:

47 Նույն տեղում, 261:

վկայություններում: Նա փաստում է, որ Էհմանը համոզում էր հայերին հանձնել գենքերը՝ պնդելով, որ դա վերահաս վտանգից ազատվելու ամենակարճ ճանապարհն է: Որոշ հայեր սույնիսկ գենք են գնում՝ այն հանձնելու համար: Այդ քարոզը նա անում է ոչ միայն ամբողջ Խարբերդում, այլև հարակից գյուղերում: Այնուհետև հայտնում է, որ զորակոչի ենթակաները պետք է դուրս գան թաքստոցներից, ինչը ևս կազատեր նրանց հարազատներին վերահաս վտանգներից: Երեք հոգի արձագանքում են նրա այս կոչին և «նետվում քափության զոհասեղանին»: Վերջապես, հունիսին հայտնի է դառնում, որ Խարբերդի հայությունը պետք է տեղահանվի: Էհմանը տեղյակ էր նախքան այդ տեղահանված էրզրումցիների ճակատագրին, սակայն շարունակում էր համոզել հայերին, որ ամեն ինչ հարթ է անցնելու⁴⁸:

*Հայերի հանդեպ իրականացված բռնություններ,
մասնակցություն հայերի սպանություններին*

Հայոց ցեղասպանությունը վերապրածների հուշագրություններում և վկայություններում քիչ չեն հիշատակումները գերմանացի զինվորականների դաժանությունների վերաբերյալ: Ընդ որում, նման վերաբերմունք ցուցաբերվում էր ինչպես հայազգի զինվորականների, այնպես էլ խաղաղ բնակչության հանդեպ: Ստորև բերվում է մի քանի օրինակ:

Մեսքենեի ճամբարից 10 թույն հեռավորության վրա գերմանական զինվորական ջոկատ էր կանգնել, որը Բերեջիկից Ջերաբլուսի ճանապարհով գնալու էր Բաղդադ: Նրանցից քիչ հեռու հավաքված էին 100-120 հայ որբեր, որոնք գերմանացի զինվորականների դեն նետած պարենային տուփերի մեջ ուտելիքի մնացորդ էին փնտրում: Գերմանացի զինվորականները զվարճանքի համար նետում էին այդ տուփերը, և երբ հայ որբերը վազում էին դրանք վերցնելու համար՝ զինվորականները ոտքով ուժգին հարվածում էին նրանց: Որոշ երեխաների համար դա վերջին հարվածն էր լինում⁴⁹:

Վանի նահանգի Ալջավազ քաղաքից Սեդրակ Ասպատուրյանը իր վկայություններում նշում է, որ զինվորագրված հայերն ամենափոքր առիթի դեպքում արժանանում էին ծեծի և տանջանքների: Բացի այդ շատ էին դեպքերը, երբ հայ զինվորների գնդակահարում էին: Օրինակ, Վերի Սիփան գյուղի բնակիչները զինվորագրումից հետո լեզուն չիմանալու պատճառով փորձում են փախչել, սակայն հետապնդվում և բռնվում են: Նրանց ներկայացնում են գերմանացի մի զինվորականի, որը հրամայում է գնդակահարել նրանց⁵⁰:

Բիթլիսի նահանգի Շեյխ Յաղուբի գյուղացի Հարություն Ֆրանգուլյանը վկայում է, որ զորակոչված հայերի վիճակը շատ ծանր էր, նրանց ծեծում էին, թողնում անոթի և

48 Նույն տեղում, 275-276:

49 Յակոբ Ա. Սերոբեան, *Եղեռնի յուշերս* (Պէյրուֆ, Կարալիս Լ. Նազարեան հիմնադրամի հրատ., 2005), 117-118:

50 *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում: Հատոր 1*, 262:

ակնհայտորեն խտրական վերաբերմունք ցուցաբերում: Շատ գերմանացի սպաներ, որոնց օգնությանը փորձում էին դիմել հայ զինվորները, վատ վերաբերմունք էին ցուցաբերում և նրանց դրդմամբ թուրք զինվորականներն ավելի վատ էին վարվում նրանց հետ, քան նախքան այդ⁵¹:

Ուրֆայի նահանգի Կամուրջ գյուղից Խորեն Արլապուտյանն իր վկայություններում նշել է մի դեպք արքորից: Գերմանացիները սպիտակ հաց էին ուտում՝ դեն նետելով փափուկ մաքր: Տեսնելով, որ հայերը սոված էին և ուտում էին դեն նետված հացը, սկսեցին այն «ռոներուն քսել» նոր դեն նետել, որպեսզի հայերը չուտեին⁵²: Համանման տեղեկություն է հայտնում Ադանայի նահանգի Հաճըն քաղաքից Ահարոն Մելիքսերթի Մանկրյանը: Դարձյալ արքորի ընթացքում Եփրատի գետի ափին մի օր հանդիպում են գերմանացիների, որոնք հաց էին ուտում: Մի խումբ հայեր մոտեցել են նրանց, խաչակնքվել՝ գերմանացիների գույթը շարժելու և մի կտոր հաց ստանալու ակնկալիքով: Սակայն վերջիններս ուտելիքի մնացորդները նետել են գետը: Հայերից ոմանք նետվել են գետը, ինչին արդյունքում մի քանիսը խեղդվել են⁵³:

Վանի նահանգի Ծվստան գյուղից Հարություն Հովհաննիսյանը, որը փախել էր թուրքական բանակից, իր վկայություններում հայտնում է, որ «Գերմանացի սպաները հայ զինվորների շալակին բարձում էին երեք ու կես լիտր ծանրություն ունեցող ռազմամթերք և հերկված արտերի մեջ ինը ժամ շարունակ վազեցնում էին: Ով չէր կարող որոշված տեղը հասնել առանց մեկ բուլե շունչ քաշելու, իսկույն գնդակահարում էին»⁵⁴:

Վերջում հարկ է նշել, որ հուշագրությունների և վկայությունների հետ աշխատելիս միշտ պետք է հիշել, որ, լինելով կարևոր և հաճախ եզակի նշանակություն ունեցող աղբյուրներ, այնուամենայնիվ, իրենց բնույթով հետազոտողի համար չմշակված հումք են, որը վերջինս պետք է դրանք վերծանի, ստուգի և համադրի իր ձեռքի տակ եղած այլ փաստերի հետ և նոր միայն մտցնի գիտական շրջանառության մեջ:

Ամփոփելով հոդվածը՝ նշենք հիմնական եզրահանգումներն, ինչպես նաև հետազոտության հեռանկարային ուղղությունները.

1. Քանի որ Գերմանիայի Բունդեսթագի կողմից 2016 թ. ընդունված բանաձևում հստակ նշված է Հայոց ցեղասպանության հարցում Գերմանիայի ունեցած «անփառունակ» դերը, ուստի հավանականությունը մեծ է, որ այս հարցի քննարկումները հիմնականում կընթանան գիտական հարթության վրա՝ հնարավորինս խուսափելով քաղաքական շահարկումներից և բուն մեղսակցության փաստն ապացուցելու ջանքերից:

2. Մինչ այժմ հայազգի և օտար հետազոտողների կողմից Հայոց ցեղասպանության

51 Հայոց ցեղասպանությունը օսմանկյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու: Հատոր II: Բիթլիսի նահանգ, գլխ. խմբ.՝ Ամատունի Վիրաբյան (Երևան, Հայաստանի ազգային արխիվ, 2012), 201:

52 Սվազյան, Հայոց ցեղասպանություն, 304:

53 Նույն տեղում, 440:

54 Հայոց ցեղասպանությունն օսմանկյան Թուրքիայում: Հատոր II, 40-41:

մեջ Գերմանական կայսրության մեղսակցության (իսկ ավելի լայն առումով՝ դերակատարման) հարցը ենթարկվել է բավական խորը ուսումնասիրության: Այդ ընթացքում օգտագործվել են թե՛ Առաջին աշխարհամարտի տարիների գերմանական դիվանագիտական փաստաթղթերը, թե՛ գերմանական մամուլի հրապարակումները, թե՛ այլ՝ հասանելի աղբյուրները: Ուստի, հետազոտության հեռանկարային թեմաներից կարող են լինել հետևյալները.

ա. Ժամանակին հայտնի, սակայն վերջին տասնամյակներում մոռացության մատնված Պաուլ Ռոհրբախի հրապարակախոսական ժառանգության, արխիվի և գործունեության համապարփակ ուսումնասիրությունը Հայոց ցեղասպանության և հայերի հանդեպ նրա գործունեության լույսի ներքո: Ասվածը կարևոր է, քանի որ պատմագրության (մասնավորապես, հայ պատմագրության) մեջ կա որոշակիորեն տարածված կարծիք, որ Պաուլ Ռոհրբախը հայերի տեղահանության և նույնիսկ Հայոց ցեղասպանության գաղափարի հեղինակն է:

բ. Ուսումնասիրել հայ պատմագրությունում Հայոց ցեղասպանության մեջ Գերմանական կայսրության մեղսակցության մասին առկա չափազանցված և ոչ ստույգ կարծիքները, վերհանել և գերմանական դիվանագիտական փաստաթղթերի և այլ ուսումնասիրությունների հիման վրա ներկայացնել իրական պատկերը: Դա թույլ կտա ապագայում խուսափել նմանօրինակ տեսակետների հետագա տարածումից և կնպաստի գիտական հետազոտության անաչառության մակարդակի բարձրացմանը:

գ. Գերմանական զինվորականների մեղսակցության մասին մասնավոր փաստերի փնտրտուք և վերհանում առանձին անձանց (հայ և օտարազգի) հուշերում, հատկապես՝ անտիպ: Դրա համար պետք է, հատկապես, փորձել գտնել Առաջին աշխարհամարտի ժամանակ Օսմանյան կայսրությունում գտնվող օտարազգիների անձնական արխիվները և ուսումնասիրել դրանք:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ միայն Հայաստանում գտնվող աղբյուրների հիման վրա թեմայի վերաբերյալ հետագա ուսումնասիրությունների դաշտը բավական սահմանափակ է և շատ դեպքերում կարող է վերածվել արդեն իսկ հայտնի փաստերի պարզ վերաշարադրման:

Aram R. Mirzoyan
PhD in History

SOME PROSPECTS FOR STUDYING THE COMPLICITY OF THE GERMAN EMPIRE IN THE ARMENIAN GENOCIDE

SUMMARY

Key words: Armenian Genocide, German Empire, complicity, memoirs and testimonies, German military.

In studying the history of the Armenian Genocide, consideration of the issue of the organizers of this crime and accomplices is of key importance. In the context of the second part of this question, the problem of complicity of the German Empire is of greatest interest.

Armenian and foreign researchers have regularly addressed this problem (including coverage of a broader topic – the role of the German Empire during the Armenian Genocide in previous years), studying it from different points of view: political, military, economic, humanitarian, etc. The already accumulated research material has created the need for some intermediate observations.

The article presents some intermediate conclusions and prospective areas of research on this topic. They can be useful for researchers planning to deal with the topic of the involvement of the German Empire in the Armenian Genocide, in order to avoid possible repetitions and facilitate their research path.

Արամ Ք. Միրզոյան

кандидат исторических наук

НЕКОТОРЫЕ ПЕРСПЕКТИВЫ ИЗУЧЕНИЯ СОУЧАСТИЯ ГЕРМАНСКОЙ ИМПЕРИИ В ГЕНОЦИДЕ АРМЯН

РЕЗЮМЕ

Ключевые слова: Геноцид армян, Германская империя, соучастие, мемуары и свидетельства, немецкие военные.

В изучении истории Геноцида армян ключевое значение имеет рассмотрение вопроса организаторов этого преступления и его соучастников. В контексте второй части этого вопроса наибольший интерес представляет проблема соучастия Германской империи.

Армянские и зарубежные исследователи регулярно обращались к этой проблеме (включая освещение более широкой темы – роль Германской империи во время Геноцида армян в предшествующие годы), изучая ее с разных точек зрения: политической, военной, экономической, гуманитарной и др. Уже накопленный исследовательский материал дает возможность для некоторых наблюдений.

В статье представлены некоторые промежуточные выводы и перспективные направления исследований по данной теме. Они могут быть полезны исследователям, планирующим заняться темой причастности Германской империи к Геноциду армян, чтобы избежать возможных повторений и облегчить их исследовательский путь.

REFERENCES

Akopyan, Stepan. *Западная Армения в планах империалистических держав* [Western Armenia in the Plans of Imperialistic Powers]. Yerevan: Academy of Sciences of ArmSSR, 1967;

Arzumanyan, Makich. *Հայաստանի 1914-1917* [Armenia 1914-1917]. Yerevan: “Hayastan”, 1969;

Avetyan, Andreï. *Германский империализм на Ближнем Востоке. Колониальная политика германского империализма и миссия Лимана фон Сандерса* [German Imperialism in the Middle East. The Colonial Politics of German Imperialism and Liman von Sanders’ Mission]. Moscow: “Mezhdunarodnye otnosheniia,” 1966;

Gasparyan, Hovhannes. *Հովհաննես Գասպարյանի կենսագրությունը* [The Biography of Hovhannes Gasparyan]. AGMI Collections;

Hakobyan, T’adevos; Meliq-Bakhshyan, Step’an; Barseghyan, Hovhannes. *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 4* [The Dictionary of Toponymy of Armenia and Adjacent Territories, Vol. 4]. Yerevan: YSU Press, 1998;

Hayruni, Ashot. *Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը* [The Mission of Johannes Lepsius]. Yerevan: “Nairi,” 2002;

Hovhannisyán, Lilit. *Հայկական հարցը և մեծ տերությունները 1914-1917 թվականներին*. [The Armenian Question and the Great Powers in 1914-1917]. Yerevan: “Gitutyun,” 2002;

Kirakosyan, John. *Западная Армения в годы Первой мировой войны* [Western Armenia during the Years of World War I]. Yerevan: YSU Press, 1971;

Leo. *Այցյալից* [From the Past]. Tbilisi: “Khorhrdayin Kovkas,” 1925;

Martirosyan, Hayk. *Գերմանական միսիոներական գործունեությունն Օսմանյան կայսրությունում. Մարաշի կայանը (1896-1919 թթ.)* [German Missionary Activities in the Ottoman Empire: Marash Station (1896-1919)]. Yerevan: author’s edition, 2016;

Saqayan, Dora. *Նրանց բռնի են անապատները. Կարա և Ֆրից Ջիգրիստ-Հիլթիները Հայոց ցեղասպանության ականատեսներ (1915-1918)* [They Drive Them into the Desert: Clara and Fritz Sigrüst-Hilty as Eyewitnesses of the Armenian Genocide 1915-1918]. Yerevan: YSU Press, 2017;

Sargsyan, Ervand. *Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում* [Turkey and Its Aggressive Policy in Transcaucasia]. Yerevan, “Hayastan”, 1964;

Sargsyan, Ervand. *Политика османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начале XX вв.* [The Politics of Ottoman Government in Western Armenia and the Powers in the Last Quarter of XIX and at the Beginning of XX Centuries]. Yerevan: Academy of Sciences of ArmSSR, 1972;

Serobian, Hakob. *Եղեռնի յուշերս* [My Memoirs from Yeghern] Beirut: 2005;

Stepanyan, Stepan. *Армения в политике империалистической Германии: (конец*

XIX - начало XX века) [Armenia in the Politics of Imperialist Germany (the End of XIX - Beginning of XX Centuries). Yerevan: "Aïastan", 1975;

Svazlyan, Verzhine. *Հայոց ցեղասպանություն: Ականատես վերապրողների վկայություններ* [The Armenian Genocide. The Testimonies of Survived Eye-Witnesses]. Yerevan, AGMI, 2011;

Virabyan, Amatuni (ed.). *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու: Հատոր I: Վանի նահանգ* [The Armenian Genocide in the Ottoman Empire. Survivors' Testimonies. The Collection of Documents. Vol. I. Province of Van]. Yerevan: National Archive of Armenia, 2012;

Virabyan, Amatuni (ed.). *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու: Հատոր II: Բիթլիսի նահանգ* [The Armenian Genocide in the Ottoman Empire. Survivors' Testimonies. The Collection of Documents. Vol. II. Province of Bitlis]. Yerevan: National Archive of Armenia, 2012;

Virabyan, Amatuni (ed.). *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու: Հատոր III: Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքիրի, Սեբաստիայի, Տրապիզոնի նահանգներ, Պարսկահայք* [The Armenian Genocide in the Ottoman Empire. Survivors' Testimonies. The collection of Documents. Vol. III. Provinces of Erzurum, Kharberd, Diarbekir, Sebastia, Trapizon, Persian Hayq]. Yerevan: National Archive of Armenia, 2012.